12889

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«22» 10 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0203-21

Ձեռնարկողը՝ *«Հայնախագիծ» ԲԲԸ*
ՀՀ, ք. Երևան, Չարենցի 1

Գործունեությունը՝ *Շիրակի մարզի «Շիրակ-5» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված փարածական պլանավորման փաստաթղթերի (ՄՄՀՏՊՓ) նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվություն*
ՀՀ, Շիրակի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խ. Մարտիրոսյան

Առդիր՝ 10 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0203-21
<22> 10 2021թ.

Շիրակի մարզի «Շիրակ-5» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի (ՄՄՀՏՊՓ) շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝	«Հայնախագիծ» ԲԲԸ
Փաստաթղթի տեսակը՝	Հիմնադրութային փաստաթուղթ
Ներկայացված նյութեր՝	ՄՄՀՏՊՓ նախագծեր, շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման /ՇՄԱՌԳ/ հաշվետվություն
Իրականացման վայրը՝	ՀՀ, Շիրակի մարզի «Շիրակ-5» միկրոռեգիոնում ընդգրկված 15 գյուղական համայնքներ

Ներածական մաս. Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 1-ին մասի՝ «Շիրակ-5» ՄՄՀՏՊ փաստաթուղթը հանդիսանում է քաղաքաշինության բնագավառին վերաբերող հիմնադրութային փաստաթուղթ:

«Շիրակ-5» ՄՄՀՏՊՓ նախագծերը ներառում են՝ Բերդաշեն (ներառյալ Պաղակն), Ալվար (ներառյալ Արավետ), Աղվորիկ, Արդենիս, Գառնառիճ (ներառյալ Եղնաջուր), Զարիշար (ներառյալ Երիզակ), Ձորակերտ (ներառյալ Դարիկ), Ծաղկուտ, Լորասար, Շաղիկ (ընդամենը 15) գյուղական համայնքները:

«Շիրակ-5» ՄՄՀՏՊՓ նախագիծն ընդգրկում է 38370.63 հա մակերեսով տարածք, որտեղ բնակչության թիվը կազմում է 1366 մարդ: Տարածքում առկա են բնական, բուժական, առողջապահական, հանքահումքային ռեսուրսներ: «Շիրակ-5» տարածաշրջանը ներառում է 38370.63 հա հողեր: Քանի որ հողային ֆոնդում պահուստային հողեր չկան, ապա հողերի նպատակային նշանակության փոփոխությունից հետո ընդհանուր տարածքի մակերեսը փոփոխության չի ենթարկվի:

ՄՄՀՏՊՓ նախագծի հիմնական նպատակն է՝ միկրոռեգիոնում ներառված համայնքների տարածքներում տարածական պլանավորման միջոցով բարենպաստ կենսամիջավայրի ձևավորումը, կայուն զարգացման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծումը, ինչպես նաև համայնքների սոցիալ-տնտեսական զարգացմանը և շրջակա միջավայրի և պատմամշակութային արժեքների պահպանմանն ուղղված միջոցառումների մշակումը: Սույն փաստաթղթի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման վերլուծությունները կատարվել են նախագծի դրույթներին համապատասխան, հաշվի առնելով ծրագրում ներառված

համայնքների 2017-2021 թթ. զարգացման ծրագրերը: Ծրագրում ընդգրկված գյուղական համայքների տարածքային քաղաքաշինական խնդիրների լուծման ընթացքում շրջակա միջավայրի պահպանության արդյունավետ կազմակերպման համար համալիր կերպով գնահատվել են առկա բնապահպանական խնդիրները, գոյություն ունեցող իրավիճակը և ընտրվել են զարգացման այնպիսի սկզբունքներ, որոնք թույլ կտան ներդաշնակորեն լուծել սոցիալական, տնտեսական և բնապահպանական խնդիրները:

Նկարագրական մաս. Շիրակի մարզի դիտարկվող տարածքը գտնվում է հանրապետության հյուսիս-արևմուտքում: Տարածաշրջանի հարավը զբաղեցնում է Շիրակի դաշտը, հյուսիսը՝ Աշոցքի սարահարթը, որոնք իրարից բաժանվում են Շիրակի լեռնաշղթայով: Ձևաբանական տեսակետից ռելիեֆի խոշոր տարրերն են ընդարձակ լեռնազանգվածները, լեռնաշղթաները, որոնք հաճախ ընդմիջվում են հովիտներով: Մակերևույթն անտառազուրկ է, բնորոշ է տափաստանային լեռնային լանդշաֆտներ: Մարզի միակ խոշոր գետը Ախուրյանն է, որը սկիզբ է առնում Արփի լճից: ՄՄՀՏՊԳ նախագծերում ներառված համայնքները ներառում են Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածքները: Աշոցքի շրջանը գտնվում է բարձրադիր սարահարթի վրա: Աշխարհագրական տեսակետից, այն ներկայացնում է Մերձավոր Արևելքի սարահարթի ամենահյուսիսային մասը: Դրա սահմանը հյուսիսում և արևմուտքում անցնում է Ղուկասյան լեռնաշղթայով, արևելքում՝ Ջավախքի լեռնաշղթայով, իսկ հարավում՝ աստիճանաբար անցնում է Երևանյան սարահարթը:

Երկրաբանական տեսակետից տարածքն ընդհանուր առմամբ ունի համեմատաբար միատարր հրաբխային կազմություն՝ հրաբխային կոների և լավաների հոսքերով: «Շիրակ-5» միկրոռեգիոնալ միավորի տարածքը գտնվում է 2-րդ սեյսմիկ գոտում՝ Amax=0.4g (9 բալ ըստ MSK-64 սեյսմիկ ինտենսիվության 12 բալանոց սանդղակի) առավելագույն հորիզոնական արագացման արժեքով:

Նշված համայնքներում ռեսուրսների հիմնական տեսակներն են՝ ջրեր, հողեր, գեղատեսիլ և տեսարժան վայրեր՝ տուրիզմի զարգացման համար: Ներկա իրավիճակում բնակչության հիմնական զբաղմունքն է՝ բուսաբուծությունը, այգեգործությունը, անասնապահությունը, հացահատիկի մշակումը, հողագործությունը և առևտուրը:

Շիրակի մարզի տարածքի երկրաբանական կառուցվածքի բազմազանության շնորհիվ բազմազան են նաև ընդերքի հարստությունները:

Մարզի հողատարածքներից 1691 հա-ն դրված է ընդերքօգտագործման տակ: Այս ոլորտում ներգրավված են թվով 65 կազմակերպություններ, որոնք հիմնականում զբաղված են տարատեսակ շինանյութերի՝ բազմերանգ տուֆերի, ֆելզիտների, բազալտների, անդեզիտների, դացիտների, հրաբխային խարամների, պեմզայի և ավազների, արդյունահանմամբ: Պահանջարկ և հնարավորություններ չլինելու պատճառով դրանցից շուրջ երկու տասնյակը չեն գործում, իսկ մնացածը գործում են թերծանրաբեռնվածությամբ:

Հանքավայրերի շահագործման հետևանքով խախտված տարածքներն իրենց բացասական ազդեցությունն են թողնում շրջակա միջավայրի վրա:

Հողերի պահպանության հիմնախնդրի լուծման համար անհրաժեշտ է հողի մշակման ժամանակակից մեթոդների ներդրում, քիմիական պարարտանյութերի օգտագործման նվազեցում, լքված հանքավայրերի վերագնահատում և տարածքների վերականգնում (ռեկուլտիվացիա), ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքների ընդլայնում:

«Շիրակ-5» միկրոռեգիոնի համայնքներում առկա են սոցիալ-կենցաղային, ինժեներատրանսպորտային և կոմունալ ենթակառուցվածքների հետ կապված հիմնախնդիրներ, որոնց համար համայնքների զարգացման ծրագրերում սույն փաստաթղթով առաջարկվել են հեռանկարային զարգացման ուղղություններ:

Ծրագրում ընդգրկված համայնքների սոցիալական միջավայրի և շրջակա միջավայրի վրա տեխնածին ազդեցության հիմնական գործոններ են հանդիսանում.

- մթնոլորտային օդի աղտոտումն արդյունաբերական ձեռնարկությունների, բնակելի հատվածի ջեռուցման և ավտոտրանսպորտի արտանետումներով,
- մակերևութային ջրերի աղտոտումն արտադրական հոսքաջրերով և կենցաղային կեղտաջրերով,
- հողերի աղտոտումը կոշտ կենցաղային թափոններով,
- աղմուկը և էլեկտրամագնիսական ճառագայթումը,
- անտառի անկանոն օգտագործումը, որը համայնքների շրջակայքում էներգետիկ ճգնաժամի ժամանակ հանգեցրել է անտառային տարածքների և կենսաբազմազանության կրճատմանը:

Շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցություն ունեցող բնական գործոններից են հանդիսանում՝ սողանքները, սելավները և հողերի էրոզիան:

Ներկայումս «Շիրակ-5» միկրոռեգիոնում ընդգրկված համայնքներում մթնոլորտային օդն աղտոտվում է արդյունաբերական ձեռնարկությունների, բնակելի և հասարակական շենքերի ջեռուցման անհատական սարքերի և ավտոտրանսպորտի արտանետումներով:

Մթնոլորտ վնասակար արտանետումների հիմնական մասը բաժին է ընկնում ավտոտրասպորտին, որի արտանետումները կազմում են մթնոլորտ արտանետումների 97,4 %-ը: Հեռանկարում նախատեսված է բոլոր ձեռնարկությունների համար 5-10% արտադրողականության աճ:

Հիմնականում արդյունաբերական ձեռնարկությունները պատկանում են սանիտարական վտանգավորության V դասին, արտադրական արտանետումները աննշան են: Ֆոնային աղտոտվածությունը աղտոտող բոլոր նյութերով համայնքներում զգալիորեն ցածր է սահմանային թույլատրելի կոնցենտրացիաներից (ՍԹԿ):

ՄՄՀՏՊՓ համայնքներում, որտեղ առկա են արդյունաբերական փոքր ձեռնարկություններ, գործում են պլանային արտադրողականության 5-10%-ի սահմաններում: Գործող ձեռնարկություններից արդյունաբերական բոլոր աղբյուրներից վնասակար արտանետումների ընդհանուր քանակները 1,73 տ/տարի:

«Շիրակ-5» համայնքներում հիմնականում գազաֆիկացված չեն:

Ջեռուցման ժամանակահատվածում վնասակար արտանետումների հաշվարկները կատարված են փայտի ծախսից:

Մթնոլորտ վնասակար արտանետումների քանակը ջեռուցումից, արդյունաբերությունից և ավտոտրանսպորտից կազմում է 84,2 տ/տարի:

Հիմնականում համայքների մթնոլորտ վնասակար արտանետումներից տնտեսությանը հասցված տնտեսական վնասը կազմում է 2,134 մլն. ՀՀ դրամ տարի:

Հեռանկարում նախատեսված է ջեռուցման համար 50% արևային էներգիա և 50% գազ: Ի հաշիվ ջեռուցման նոր տեխնոլոգիաների հեռանկարում մթնոլորտային արտանետումները կնվազեն՝ տարեկան 10 տ/տարի քանակով:

Օդային ավազանի առավել բարելավման նպատակով անհրաժեշտ է իրականացնել փողոցների բարեկարգման և կանաչ տարածքների ընդլայնման, ինչպես նաև գազիֆիկացման աշխատանքներ: Օդային ավազանի որակի վրա զգալի ազդեցություն

կարող էին ունենալ անտառային տարածքները, սակայն ՀՀ Շիրակի մարզը, հանդիսանում է հանրապետության ամենասակավանտառ մարզը: Անտառային՝ շուրջ 4405.3 հա տարածքներից ներկայումս տնկարկներ կան ընդամենը 2033 հա-ի վրա: Վերջին տարիներին մարզում հիմնվել է պետական ֆոնդի շուրջ 160 հա նոր անտառազանգված, իսկ համայնքներում ավելի քան 40 հա համայնքային անտառ :

Տարածքի համալիր գնահատականը վերլուծվել է տեղանքի կլիմայական պայմանների, մթնոլորտային օդի աղտոտվածության մակարդակի, արդյունաբերական պոտենցիալի, բնակչության և ավտոտրանսպորտի խտության ցուցանիշների հաշվառմամբ:

Համաձայն արդյունքների «Շիրակ-5» ՄՄՀՏՊՓ տարածաշրջանի գյուղական համայնքներում անտրոպոգեն թույլ ազդեցության գոտին կազմում է 38334,36 հա, իսկ տարածքի համալիր գնահատականը հիգիենիկ իրավիճակով համարվում է՝ բարենպաստ /վտանգ չի հարուցում/,

ՄՄՀՏՊ փաստաթղթում ընդգրկված 15 գյուղական համայքները գտնվում են Ախուրյան ջրավազանային կառավարման տարածքում:

Ախուրյան գետի մեջ նշված համայնքների տարածքներում տեղի է ունենում տնտեսակենցաղային հոսքաջրերի որոշ մասի անկազմակերպ, ինչը հանդիսանում է գետի աղտոտվածության հիմնական աղբյուրը: Համայնքների աշխարհագրական դիրքը թույլ չի տալիս «Շիրակ-5» ամբողջ տարածաշրջանի համար մեկ միասնական կեղտաջրերի մաքրման կայանի ընտրություն:

Վերջին տարիներին Ախուրյան գետի կիրճում զանազան սպասարկման օբյեկտների շահագործման արդյունքում, զգալիորեն ավելացել է գետի աղտոտվածությունը:

Գետ թափվող հոսքաջրերի հետևանքով շրջակա ջրային ավազանին հասցված տնտեսական վնասը ներկա դրությամբ գնահատվում է տարեկան 0,24 մլն. ՀՀ դրամ:

Նշված համայնքների սահմաններում, գետի ջրերի աղտոտվածության մակարդակը գնահատվում է.

- ըստ սանիտարական ռեժիմի՝ արտակարգ բարձր,
- ըստ զգայարանական ցուցանիշների՝ արտակարգ բարձր,
- ըստ սանիտարա-թունաբանական ցուցանիշների՝ բարձր:

Ախուրյան գետի համար ստացված ինքնամաքրման K=0.074 ցուցանիշի դեպքում, խառնուրդների նոսրացման համար պայմանները գնահատվում են որպես անբավարար, իսկ գետի ինքնամաքրման պոտենցիալը՝ ցածր: Գետը դասվում է «անբավարար» կարգավիճակի դասին /4-րդ դաս/, արդյունքում «Շիրակ-5» միկրոռեգիոնի համայնքների սահմաններում գետի օգտագործումը ռեկրեակցիոն նպատակով բացառվում է:

Հեռանկարում, բնակչության աճի և կոյուղու համակարգերի կառուցման դեպքում կավելանա նաև գետ թափվող տնտեսակենցաղային կեղտաջրերի քանակը, ինչը իր հերթին կհանգեցնի գետի աղտոտվածության ավելացմանը: Անհրաժեշտ է նշված համայնքների համար կեղտաջրերի մաքրման կայանի կառուցում:

Տնտեսակենցաղային հոսքաջրերի մաքրման համար գյուղական համայնքներում, նախատեսված է տեղադրել տարբեր արտադրողականության «Յալմա-2000» մակնիշի կենսաբանական մաքրման կայան: Մաքրման կայանը ունի բազմաստիճանային մաքրման կառուցվածք և ներառում է սեպտիկ խուց, անաերոբ կենսաբանական ռեակտոր, կենսազտիչ առաջին և երկրորդ աստիճանի օդավորման ավազան (աերոտենկ), երկու պարզարան, պոմպային հատվածամաս: Մաքրման արդյունավետությունը 98%:

Գետ թափվող հոսքաջրերի հետևանքով շրջակա ջրային ավազանին հասցված տնտեսական վնասը կենսաբանական մաքրման կայանների առկայության դեպքում զգալիորեն նվազում է՝ 0,24 մլն. դրամից նվազելով մինչև 0,045 մլն. դրամ/տարի:

«Շիրակ-5» տարածաշրջանի համայնքներում հեղեղատար կոյուղու բացակայության արդյունքում գարնանային ձնհալի և աշնանային հորդ անձրևների ժամանակ հնարավոր են տարածքների հեղեղումներ: Այս երևույթից խուսափելու նպատակով բոլոր համայնքերի համար առաջարկված է հեղեղատար առուների նախագծում և կառուցում: Տարվա ընթացքում անձրևաջրերի քանակը հաշվարկված է գործող մեթոդակարգի համաձայն: Տեղումների տարեկան քանակը կազմում է 581 մմ: Բնակավայրերի տարածքի մակերեսը՝ 436,31 հա:

Ախուրյանի ջրավազանային գետ (Ախուրյան) թափվող անձրևաջրերի քանակը կկազմի՝ 1013,98 մլն.մ^3/տարի: Անձրևաջրերի արտահոսքից տնտեսությանը հասցված տնտեսական վնասը կգնահատվի տարեկան 16,51 մլն. ՀՀ դրամ:

Համապատասխան տարածքային զարգացման հայեցակարգի բնակչության աճը հիմնականում պահպանում է վերջին տարիների տեղի ունեցող միտումները: Գերակշռով թվով գյուղական բնակավայրերի աճի գործակիցը սահմանված է մինչև 1.5%:

«Շիրակ-5» տարածաշրջանի բնակչության հաշվարկային թիվը կազմում է 1502 մարդ: Գյուղական համայնքների ընդհանուր մակերեսը կազմում է 38370.63 հա: Տնտեսության զարգացման հիմնական ճյուղերն են այգեգործությունը, առևտուրը, անասնապահությունը, հողագործությունը, հացահատիկային կուլտուրաների մշակումը, գյուղմթերքների արտադրությունը:

Նախագծով նախատեսված հողերի նպատակային նշանակության, հողատեսքերի գործառական նշանակության փոփոխությունները ներկայացվում են ստորև.

ՇԻՐԱԿ-5 ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԻ ՏԵԽՆԻԿԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ				
	Ցուցանիշները	Չափման միավորը	Փաստացի	Հեռանկարային
1	Միկրոռեգիոնի համակցված փաստաթղթի դեպքում նախագծվող համայնքների վարչական սահմաններում ընդգրկված հողերի ընդհանուր մակերեսը	հա	38370.63	38370.63
2	Բնակավայրերի հողեր	հա	472.31	470.535
3	Արդյունաբերության, ընդերքօգտագործման եվ այլ արտադրական նշանակության հողեր	հա	103.29	104.88
4	Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների հողեր	հա	32.25	45.056
5	Հատուկ պահպանվող տարածքների հողեր	հա	15846.72	15861.139
6	Հատուկ նշանակության հողեր	հա	802.93	802.93
7	Գյուղատնտեսական նշանակության հողեր	հա	20865.79	20838.75
8	Անտառային հողեր	հա	184.96	184.96
9	Ջրային հողեր	հա	62.11	62.11

«Շիրակ-5» տարածաշրջանի հողածածկույթը հիմնականում ներկայացված է սևահող կրազերծված խորքային կարբոնատային հողերով:

Հողի հիմնական աղտոտումը կատարվում է ավտոտրանսպորտի արտանետումներից, կենցաղային և արդյունաբերական թափոնների աղբավայրերից և թափոնակույտերից:

Հողի աղտոտման հիմնական աղբյուրներն են հանդիսանում ավտոտրանսպորտի, արդյունաբերական ձեռնարկությունների փոշեգազային մթնոլորտային արտանետումները, արդյունաբերական և կենցաղային թափոնների աղբավայրերը և թափոնակույտերը:

Հողի աղտոտման հիմնական աղբյուրներն են հանդիսանում.

- ավտոտրանսպորտի, արդյունաբերական ձեռնարկությունների փոշեգազային մթնոլորտային արտանետումները,
- արդյունաբերական և կենցաղային թափոնների կազմակերպված և չկազմակերպված աղբյուրները:

Մթնոլորտային օդի, մակերևութային և ստորգետնյա ջրերի աղտոտվածությունից պահպանման միջոցառումները, համայնքների կանաչապատումը, թափոնների կառավարումը դասվում են հողի աղտոտման կանխարգելման և էռոզիայից պահպանման միջոցառումների շարքին:

«Շիրակ-5» տարածաշրջանի հողային ծածկույթում ծանր մետաղներով աղտոտվածության մոնիթորինգ չի իրականացվում: Հողերի աղտոտվածության մակարդակը գնահատված է ցածր (խտության գումարային ցուցանիշը՝ ԽԳՑ<16), աղտոտվածության դասը՝ թույլատրելի, էկոլոգիական իրավիճակը՝ բավարար:

Հեռանկարում տարածական պլանավորման նախագծերի իրականացման արդյունքում հողերի աղտոտվածության մակարդակի ավելացում չի սպասվում, քանի որ նոր արդյունաբերական ձեռնարկությունների կառուցում չի նախատեսված:

Հեռանկարային ժամանակահատվածում նախատեսված է վերականգնել միկրոռեգիոնի տարածքում շահագործված և շահագործվող օգտակար հանածոների հանքավայրերի խախտված տարածքները: Ռեկուլտիվացման/վերականգնման աշխատանքները կներառեն երկու փուլեր՝ կենսաբանական և տեխնիկական: Կենսաբանական եղանակը կկիրառվի այն գրունտերի համար, որտեղ էրոզիան կանխարգելելու նպատակով անհրաժեշտ կլինի ստեղծել բուսական շերտ: Հողի աղտոտման կանխարգելման և հակաէռոզիոն միջոցառումների շարքին են դասվում համայնքային տարածքների կանաչապատումը, թափոնների կառավարումը և այլն:

«Շիրակ-5» համայնքներում սանիտարական մաքրման ենթակա տարածքը կազմում է 436,31 հա մակերես: Համայնքներում գործող աղբավայրերի ընդհանուր քանակը 8 է: Աղբահանումը կատարվում է անկանոն, ինչը հանգեցնում է համայնքների սանիտարական վիճակի վատացմանը: Հաճախակի են աղբի կուտակումները հենց բնակելի տների բակերում:

Համայնքներում առաջացած կենցաղային կոշտ թափոնների (ԿԿԹ) քանակը ներկա իրավիճակում կազմում է 341,5 տ/տարի:

Նախատեսված է գոյություն ունեցող աղբավայրերի տարածքները պարսպապատել, բարեկարգել: Աղբահանությունը դարձնել կազմակերպված, տոփանել և հողով ծածկել, մինչև ամբողջ համայնքների համար աղբամշակման գործարանի նախագծումը և կառուցումը, կամ կազմակերպել աղբի տեսակավորում: Հեռանկարում սպասվում է թափոնների քանակի ավելացում մոտավորապես 10%-ի չափով:

Համայնքներում առաջացած կենցաղային կոշտ թափոնների (ԿԿԹ) ընդհանուր քանակը հեռանկարում կկազմի մոտավորապես 375,5 տ/տարի /հեռանկարում բնակչության թիվը կկազմի 1502 մարդ/:

Շիրակի մարզպետարանը առաջարկում է «Շիրակ-5» գյուղական համայնքների համար աղբի հեռացման, տեսակավորման և վերամշակման վայր նախատեսել 8 հա մակերես ունեցող աղբավայր՝ միաժամանակ կոնսերվացնելով նշված համայնքներում առկա աղբավայրերը:

Արդյունաբերական թափոնները առաջանում են արդյունաբերական ձեռնարկություններում, որոնք բաժանվում են 2 խմբի՝

- օգտագործման ենթակա;
- ոչ օգտագործելի:

Օգտագործման ենթակա թափոնների շարքին եմ դասվում՝ օգտագործված յուղերը, թեփերը:

Ոչ օգտագործելի թափոնները գործող օբյեկտների բնույթից կախված, թունավոր չեն և պատկանում են ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից համաձայնեցված վայր տեղափոխվող թափոնների խմբին:

Արդյունաբերական թափոնների ընդհանուր քանակը կազմում է 1,1 տ/տարի, որից՝ օգտագործման ենթակա թափոններ (յուղեր, թեփեր)՝ 0,3 տ/տարի, շինարարական օգտագործելի թափոններ՝ 0,4 տ/տարի, ոչ օգտագործելի թափոններ (շինարարական, մետաղական օգտագործված տարաներ)՝ 0,4 տ/տարի:

Արդյունաբերական բոլոր ձեռնարկությունները պատկանում են սանիտարական վտանգավորության IV-V դասին: Հեռանկարում սպասվում է արդյունաբերական թափոնների քանակի ավելացում մոտավորապես 10%-ի չափով:

Արդյունաբերական թափոնների ընդհանուր քանակը հեռանկարում կազմում է 1,24 տ/տարի, որից՝ օգտագործման ենթակա թափոններ (յուղեր, թեփեր)՝ 0,35 տ/տարի, շինարարական օգտագործելի թափոններ՝ 0,45 տ/տարի, ոչ օգտագործելի թափոններ (շինարարական, մետաղական օգտագործված տարաներ)՝ 0,44 տ/տարի:

«Շիրակ-5» միկրոռեգիոնի տարածքում ընդհանուր գերեզմանների թիվը կազմում է 10 /ընդհանուր 20 հա մակերեսով տարածքում/ որոնցից բոլորը գործող են: Ներկա պահին գերեզմանոցներում սանիտարական պահպանման գոտին պահպանված չէ:

Ծրագրով նախատեսված է գերեզմանոցների պարսպապատումը սանիտարական պահպանման գոտու չափերով հետագա հուղարկավորումների ընթացքում այն չխախտելու համար:

Գերեզմանոցների այն հատվածներում, որտեղ ներկայումս սանիտարական պահպանման գոտին ապահովված չէ, նախատեսվում է ճանապարհի երկկողմանի սահմանազատում՝ ծառուղիների միջոցով և գերեզմանոցի պարագծով երկշարք ծառապատում: Գերեզմանոցների ճանապարհի եզրային հատվածներում, նախագծով նախատեսված է տարածքի բարեկարգում և կանաչապատում, ինչը կնպաստի փոշու արտանետումների տարածման կանխարգելմանը:

«Շիրակ-5» միկրոռեգիոնի համայնքների կանաչապատման համակարգի կայուն զարգացման համար անհրաժեշտ է իրականացնել գործողությունների համալիր ծրագիր, որն իր մեջ կպարունակի՝ համայնքապետարաններում մասնագիտացված կառուցվածքային ստորաբաժանման ստեղծումը, նոր տարածքների կանաչապատման իրականացումը՝ նախագծերին և ծրագրերին համապատասխան, ոռոգման համակարգի բարելավումը: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել նաև գյուղական համայնքների

կանաչապատմանը, որպես օդը մաքրող գործոն: Այդ նպատակի համար նախատեսված են ստեղծել այգիներ, կանաչ գոտիով սպորտ-հրապարակներ, շրջանային նշանակության կանաչ գոտիներ և այլն: Նախագծված են նաև մայրուղային ճանապարհների, գերեզմանոցի և այլ օբյեկտների սանիտարական պահպանության գոտիների կանաչապատում:

Ներկա դրությամբ «Շիրակ-5» ՄՄՀՏՊՓ-ում ընդգրկված համայնքներում ընդհանուր օգտագործման կանաչ տնկարկների (զբոսայգիներ, պուրակներ և այլն) ընդհանուր մակերեսը կազմում է 0,3 հա: Շինարարական նորմերի համաձայն գյուղական համայնքներում ընդհանուր օգտագործման կանաչ տնկարկների մակերեսը պետք է կազմի 12 մ²/մարդ, իսկ փոքր քաղաքների համար 10 մ²/մարդ:

Տնամերձ հողամասերում կանաչապատման մասը տատանվում է 0.5-ից 0.56:

Հեռանկարում համայնքներում ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների մակերեսը կկազմի 1,8 հա, իսկ սահմանափակ օգտագործման կանաչը շուրջ 392,68հա:

ՇՄԱՌԳ հաշվետվությանը կից փաստաթղթերում վերլուծվել է նաև «Շիրակ-5» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածքների բնակավայրերին սպառնացող բնածին վտանգները և /կարկուտ, քամի, հեղեղ, սելավ/ վտանգավոր երկրաբանական երևույթները /սողանքներ/ և հնարավոր արտակարգ ռիսկերը և առաջարկվել են կանխարգելմանը և նվազեցմանն ուղղված նախագծային լուծումներ:

Համայնքների տարածքային զարգացման համար առաջնահերթ ընտրվել են այնպիսի ուղղություններ, որոնց համար ներդրումները նպաստավոր կլինեն տարբեր ոլորտների զարգացման համար և կխթանեն.

- արտադրության հիմնական ճյուղերի զարգացմանը,
- հնարավոր ռեկրեացիոն գոտիների կազմակերպմանը,
- շրջակա միջավայրի բարելավմանը և պահպանմանը,
- ինժեներական ենթակառուցվածի, ճանապարհային ցանցի և սոցիալ-կենցաղային համակարգի զարգացմանը,
- պատմամշակութային ժառանգության պահպանությանը,
- բնական և տեխնածին վտանգավոր երևույթներից տարածքի պաշտպանությանը,
- սահմանամերձ տարածքներում բնակչության անվտանգության ապահովմանը,
- երկրորդական և միջգյուղական ճանապարհների բարելավմանը և բարեկարգմանը,
- ճանապարհների բարելավմանը և բարեկարգմանը:

«Շիրակ-5» տարածաշրջանի զարգացման ծրագրով նախատեսվող աշխատանքները և նախագծային լուծումներ միտված են միկրոռեգիոնի սոցիալական և բնապահպանական իրավիճակի բարելավմանը: Տարածաշրջանում, նախագծային ժամանակաշրջանում շրջակա միջավայրի պահպանության, բնապահպանական իրավիճակի բարելավման և բնակչության կենսամակարդակի բարձրացման համար ծրագրով նախատեսված առաջնահերթ և հեռանկարային միջոցառումները ներառում են.

- երկրորդական և միջգյուղական ճանապարհների ասֆալտապատում և խճապատում, ճանապարհաշինության աշխատանքներ,
- ջրամատակարարման համակարգի և կոյուղու բարելավում, համայնքների գազաֆիկացում,
- անձրևաջրերի հեռացման համակարգի նախագծում և կառուցում,
- շրջակա միջավայրի (օդ, ջուր, հող) մոնիթորինգի կազմակերպում,
- գետեր թափվող տնտեսա-կենցաղային և արտադրական հոսքաջրերի կենսաբանական մաքրման կայանի նախագծում և կառուցում,

- վնասված հասարակական և արտադրական նշանակության շինությունների և կառույցների վերականգնում,
- շահագործվող հիդրոէլեկտրակայանների արդիականացում, ջրառի կետում ջրաչափիչ սարքավորումների տեղադրում՝ գետային էկոհամակարգի պահպանության նպատակով,
- ոռոգման ներքին ցանցի վերականգնում,
- համայնքներում հանգստի գոտիների ստեղծում,
- մսի վերամշակման արտադրամասի ստեղծում (սպանդանոցի կառուցում),
- սանիտարական աղբավայրերի և աղբամշակման գործարանի կառուցում, աղբի տեսակավորում,
- ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքների ընդլայնում, ճանապարհի եզրերին, հանգստի գոտիներում կանաչապատման իրականացում,
- մեքենաների տեխնիկական վիճակի վերահսկողության սահմանում, ինչը կնպաստի ավտոտրանսպորտի արտանետումների կրճատմանը,
- ջեռուցման նոր տեխնոլոգիաների կիրառում, ինչը կկրճատի մթնոլորտային արտանետումները,
- ընդերքօգտագործման հետևանքով խախտված տարածքների վերականգնումը/ռեկուլտիվացիան,
- արդյունաբերությունում առաջատար տեխնոլոգիաների ներդրում:

Հեռանկարային ժամանակաշրջանում միկրոռեգիոնում շրջակա միջավայրի բարելավման և աղբահանության միջոցառումներից կարևորվում է՝

- կենցաղային թափոնները հավաքող կազմակերպությունների ցանցի ընդլայնումը,
- գյուղական բնակավայրերում հասարակական նշանակության բաց տարածքների ստեղծման, բարեկարգման տարածքների և ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքների ընդլայնումով:

Պատճառաբանական մաս. «Շիրակ-5» ՄՄՀՏՊ փաստաթղթում ընդգրկված 15 գյուղական համայքների համար առաջարկված քաղաքաշինական լուծումների իրականացման և շրջակա միջավայրի պահպանության արդյունավետ կազմակերպման համար, ՇՄԱՌԳ հաշվետվությունում համալիր կերպով գնահատվել են առկա բնապահպանական խնդիրները, գոյություն ունեցող իրավիճակը և ընտրվել զարգացման այնպիսի սկզբունքներ, որոնց միջոցով հնարավոր կլինի ներդաշնակորեն լուծել սոցիալական, տնտեսական և բնապահպանական խնդիրները:

Քանի որ նախագծով նախատեսված միջոցառումներն իրականացվելու են արդեն իսկ կառուցապատված բնակելի տարածքներում, հետևաբար նախագծված համակարգերի վերակառուցման աշխատանքների ազդեցությունները կկրեն լոկալ և ժամանակավոր բնույթ, իսկ բուսատեսակներին և կենդանատեսակներին հասցվող վնասը՝ նվազագույն:

Փաստաթղթի փորձաքննական գործընթացին մասնակցել են «Առողջապահության», «Արտակարգ իրավիճակների», «Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» նախարարությունները, Շրջակա միջավայրի նախարարության համապատասխան ստորաբաժանումները, Շիրակի մարզպետարանը, որոնց կողմից ներկայացված դիտողություններով և առաջարկություններով ՇՄԱՌԳ հաշվետվությունը լրամշակվել է:

Ծրագրի ազդեցության ենթակա համայնքների հանրությունը հանրային քննարկումների ձևով մասնակցել է հաշվետվության գնահատման և փորձաքննական գործընթացներին:

«Շիրակ-5» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծը ներառում է մշտադիտարկում (մոնիթորինգ) և հետնախագծային վերլուծություն, ինչը թույլ կտա հիմնադրույթի գործունեության ընթացքում վերլուծել և դիտարկել համայնքների զարգացման իրատեսական սցենարները՝ քաղաքաշինական փաստաթղթերում ներառել տնտեսության զարգացման առավել իրատեսական ոլորտներ՝ տարածաշրջանի բնապահպանական պահանջների, նորմերի և սահմանափակումների համադրմամբ ապահովելով մարդու առողջության, բնականոն զարգացման և բնառեսուրսների ռացիոնալ օգտագործման հիմնախնդիրները:

Փորձաքննական պահանջ

Հիմնադրութային փաստաթղթի շրջանակներում նախատեսվող գործունեությունների ծրագրային և նախագծային փաստաթղթերը՝ մինչև իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Հայնախագիծ» ԲԲ ընկերության կողմից ներկայացված Շիրակի մարզի «Շիրակ-5» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի (ՄՄՀՏՊՓ) շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված պահանջի պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝ Վ. Վարդանյան

Ընդամենը՝ 10 էջ